

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ  
ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Մկրտչյան Թուխմանուկ  
*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի  
պետական ինստիտուտ, Հայաստան*

**Համառոտ ներածություն:** Աշակերտների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության վիճակի հաշվառումը կարևոր դեր է խաղում դպրոցական կրթության ֆիզիկական դաստիարակության, արդյունավետ մեթոդիկայի և մանկավարժական հսկողության միջոցների և մեթոդների ռացիոնալ օգտագործման հարցերում: Այս հիմնախնդիրը հատկապես արդիական է Եվրոպայի, Ամերիկայի, ԱՊՀ երկրներում, ինչպես նաև Հայաստանում: Անցկացվող միջոցառումներն ընդունված է անվանել մարդու ֆիզիկական վիճակի մոնիթորինգ, երբ վերահսկվում են որոշակի պարամետրեր: Իրականում մոնիթորինգը կոնկրետ երևույթների, գործընթացների, հատկանիշների և ցուցանիշների դիտումների, գնահատման, վերլուծության և հղկման միջոցառումների համակարգ է: Բացի դրանից՝ մոնիթորինգը վերջին 10-15 տարիներին լայնորեն կիրառվում է նաև ֆիզիկական դաստիարակության պրակտիկայում:

**Բանալի բառեր:** *Մոնիթորինգ, ֆիզիկական զարգացում, շարժողական ընդունակություններ, ֆիզիկական դաստիարակության գործընթաց, անհատական զարգացման պրոցես, մանկավարժական թեստավորում:*

**Հիմնախնդիր:** Դպրոցականների ֆիզիկական վիճակը, շարժողական պատրաստվածության և ֆիզիկական զարգացման մակարդակը մարդու ֆիզիկական կատարելագործման կարևորագույն գործոններից են: Սա փոխհամագործակցության բարդ համակարգ է օրգանիզմի կենսաբանական ձևավորման ներքին օրենքների և նրա գոյատևման միջավայրի միջև: Մյուս կողմից, ֆիզիկական վիճակն աճող սերնդի սանիտարահամաճարակային բարեկեցության տեղեկատվական ցուցանիշներից է: Հետևաբար դպրոցականների ֆիզիկական վիճակի մակարդակի գնահատումը ֆիզիկական դաստիարակության ցանկացած ծրագրի անբաժանելի և պարտադիր մասն է, մեր երկրում հանրակրթական դպրոցի ֆիզիկական դաստիարակության գործընթացի արդյունավետության որոշման չափանիշներից մեկը:

**Հիմնախնդրին առնչվող այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծությունը:** Հիմնախնդրի համեմատական վերլուծությունը վկայում է տարբեր երկրների դպրոցականների ֆիզիկական վիճակի վատացման մասին: Այսպես, ռուս դպրոցականների մեկ երրորդի մոտ առկա է ոչ ներդաշնակություն ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության ցուցանիշների միջև (А.В. Шишова, 2016), ոսկրամկանային հիվանդությունները գերազանցում են 2,6 անգամ (Д.Г. Левитис, 2018), Ուկրաինայի դպրոցականների 70 %-ն ունի ֆիզիկական զարգացման ցածր և միջինից ցածր մակարդակ (Е. Андреева, 2014), դպրոցում ուսուցանելու ընթացքում նկատելիորեն (5-20 %) վատանում են արագաշարժության, արագաուժային ընդունակությունների, ճարպկության, դիմացկունության ցուցանիշները (И.В. Самсоненко, 2011):

Վերջին 20-30 տարիներին դպրոցականների ուժը պակասել է 10 կգ-ով, պատանիների մոտավորապես 25 %-ը նույնիսկ մեկ ձգում չի կարողանում կատարել (М. Матвеева, 2014): Եվրոպայի, Իսրայելի և Կանադայի 24 երկրների 10-15 տարեկան դպրոցականների շրջանում կատարված համալիր ուսումնասիրությունների արդյունքում գրանցվել է ֆիզիկական ակտիվության մակարդակի նվազման միտում (K. Meisner, 1996; The ..., 1996), դպրոցականների 60 %-ը չի կարողանում կատարել ֆիզիկական պատրաստվածության «Եվրոֆիտ» եվրոպական թեստերի պահանջները (Т.Ю. Круцевич, 2018): Տվյալներ կան նաև, որ միջնակարգ դպրոցների շրջանավարտների միայն 5 %-ն է համապատասխանում ֆիզիկական զարգացման և առողջական ցուցանիշների պահանջներին (В.С. Плотникова, 2012):

Մեր կարծիքով լավ վիճակում չէ նաև հայ դպրոցականների ֆիզիկական վիճակը: Այսպես, դեռահասների 23 %-ն ունի ոչ բավարար քաշ, իսկ 15 %-ը՝ ավելորդ քաշ, ինչը բացատրվում է ֆիզիկական ակտիվության պակասով (С. Саркисян, 2011), քաշի և մարմնի հասակի ցուցանիշները 1970-ական թվականների համեմատ նվազել են, ընդամենը 8 %-ն է հանձնում ֆիզիկական պատրաստության նորմատիվները (<http://www.radio van.am>):

Դպրոցականների ֆիզիկական վիճակի այսպիսի անբարեհաջող ցուցանիշներն ամենայն հավանականությամբ թերշարժունության և էկոլոգիայի բացասական գործոնների հետևանք են (С.М. Погудин, 2006; Ֆ. Գ. Ղազարյան, 2007; Թ. Լ. Մկրտչյան, 2016):

Ֆիզիկական կուլտուրայի բնագավառի ղեկավարների հետ անցկացված հարցումը ցույց տվեց, որ նրանց 90,6 %-ն առաջնահերթ խնդիր է համարում

դպրոցականների շարժողական պատրաստվածության բարելավումը (В.Ф. Лигуца, 2016):

Վերը շարադրվածն ընդգծում է տարբեր տարիքի դպրոցականների ֆիզիկական վիճակի սիստեմատիկ մոնիթորինգի անհրաժեշտությունն ու կարևորությունը հատկապես մեր երկրի հեռավոր և գյուղական շրջաններում:

**Հողվածի նպատակը:** Հայաստանի Սյունիքի մարզում բնակվող երկու սեռի դպրոցականների մոտ իրականացնել ֆիզիկական վիճակի՝ ֆիզիկական զարգացման մակարդակի և հիմնական շարժողական ընդունակությունների մոնիթորինգ:

**Հետազոտության նորույթը:** Առաջին անգամ ստացվել և քննարկվել են Սյունիքի մարզում մշտապես բնակվող 6-17 տարեկան դպրոցականների հիմնական սեռային հատկանիշներն ու ցուցանիշները բնութագրող տվյալները:

**Հիմնական նյութի շարադրումը:** Դպրոցականների ֆիզիկական վիճակի մոնիթորինգն անցկացվել է Սյունիքի մարզի 6 քաղաքներում և գյուղերում (Քաջարան, Լեռնաձոր, Անդոկավան, Ջեյվա, Դավիթ Բեկ), որոնք ընկած են ծովի մակերևույթից 600-640 մ բարձրության վրա: Գիտափորձին մասնակցել է 6-17 տարեկան 1067 դպրոցական (576 տղա և 491 աղջիկ), որոնց թույլատրվել է մասնակցել նաև ֆիզիկական կուլտուրայի դասերին: Մոնիթորինգի կազմակերպման և անցկացման ժամանակ ղեկավարվել ենք գրականության մեջ գոյություն ունեցող մեթոդական առաջարկություններով (Еврофит, 2000; Ю.Н. Вавилов, 2002; Ֆ. Գ. Ղազարյան, 2007 և այլք): Հարմարեցվել է հատուկ թեստերի մարտկոց, որը թույլ է տվել գնահատել փորձարկվողների ֆիզիկական վիճակը: Ֆիզիկական զարգացման մակարդակը որոշվել է մարմնի քաշի և հասակի ցուցանիշներով՝ մարդաչափության մեջ հայտնի մեթոդիկայով: Շարժողական պատրաստվածության գնահատման համար թեստ են հանդիսացել մկանային ուժի համար՝ երկու ձեռքերի դաստակների դինամոմետրիան, արագային ընդունակությունների համար՝ 20 մ վազքը, ցատկունակության համար՝ տեղից հեռացատկը և դիմացկունության համար՝ տարբեր տարածության վազքեր՝ կախված տարիքից. 6-7 տարեկան՝ 300 մ, 8-9 տարեկան՝ 500 մ, 10-11 տարեկան՝ 800 մ, 12-14 տարեկան՝ 1000 մ և 15-17 տարեկան՝ 2000 մ:

Մանկավարժական թեստավորումն անցկացվել է նույնական պայմաններում և միևնույն ժամանակահատվածում մշտապես ստուգվող միևնույն սարքավորումներով, հեղինակի կողմից անմիջական վերահսկվող թեստավորման պահանջներին և կանոններին նախապես ծանոթացած միևնույն ասիստենտներով (ընթերակա): Ստացված տվյալները ենթարկվել են վիճակագրական

վերլուծության. հաշվարկվել են միջին թվաբանական մեծությունը, միջին քառակուսային շեղումը, միջին թվաբանականի սխալը, ինչպես նաև վարկածի ստուգումը Ստյուդենտի չափանիշով:

Դպրոցական օնտոգենեզի շրջանում ֆիզիկական զարգացման ցուցանիշները նկատելիորեն բարելավվում են (աղ. 1): Այսպես, 6-17 տարեկան երկու սեռի դպրոցականների մարմնի հասակն ավելանում է 1.3-1.4 անգամ: Սակայն բացարձակ ցուցանիշներով տղաները աղջիկներին գերազանցում են 9 սմ-ով: Տարիքային այդ նույն հատվածում մարմնի քաշի ցուցանիշները ևս մեծանում են և գրեթե 2 անգամ ավելի, քան մարմնի հասակը, բացարձակ տվյալներով տեղաշարժերը երկու սեռի դպրոցականների մոտ գրեթե նույնական են (39.8 և 36.3 կգ):

*Աղյուսակ 1.*

*Ֆիզիկական զարգացման հատկանիշների տարիքային տեղաշարժերը*

Տարիքը	Մարմնի հասակը, սմ		Մարմնի քաշը, կգ	
	տղաներ	աղջիկներ	տղաներ	աղջիկներ
6	123.3±0.70	122.8±1.64	21.1±0.46	20.4±0.49
7	128.2±0.40	126.3±0.70	22.3±0.40	22.1±0.44
8	131.5±0.74	130.4±0.78	25.2±0.58	24.3±0.51
9	133.7±0.64	133.1±0.82	27.9±0.47	26.5±0.90
10	136.7±1.10	136.5±0.85	32.1±0.83	30.7±1.04
11	138.9±0.73	138.6±0.95	33.6±0.59	31.4±0.82
12	142.6±0.88	140.3±0.85	35.5±1.62	34.8±0.81
13	145.8±0.75	145.4±1.50	39.3±1.56	36.4±1.86
14	150.3±0.60	147.1±2.89	45.4±1.06	41.6±1.06
15	155.4±1.34	149.3±1.25	50.4±1.18	45.3±1.63
16	161.3±1.54	153.5±1.14	55.3±1.87	50.1±1.86
17	167.8±0.90	158.2±1.33	60.9±6.61	56.7±1.42

Ինչ վերաբերում է շարժողական պատրաստվածության ցուցանիշներին, ապա ուսումնասիրվող բոլոր ցուցանիշները՝ մկանային ուժ, ցատկունակություն, արագաշարժություն և դիմացկունություն, տարիքի հետ երկու սեռի դպրոցականների մոտ անշեղորեն աճում են, ինչը օնտոգենետիկ աճի և զարգացման օրինաչափ երևույթ է (աղ. 2): Սակայն տարբեր շարժողական ընդունակությունների ցուցանիշների տեղաշարժերը տարբեր են և անհամաչափ նաև սեռային առումով: Այսպես՝ արագաշարժության ցուցանիշները 12 տարվա

ընթացքում երկու սեռի դպրոցականների մոտ բարելավվում են 1.8 անգամ, սակայն բացարձակ ցուցանիշներով գերազանցում են տղաների արդյունքները:

Ցատկունակության ցուցանիշներում գերազանցում են տղաները տարիքային բոլոր խմբերում, որտեղ աճը կազմում է 107 սմ, իսկ աղջիկների մոտ՝ 67 սմ: Հասկապես նկատելի տարբերություններ են բացահայտվել Սյունիքի մարզի դպրոցականների ուժային ընդունակություններում: 6-17 տարեկան տղաների մոտ աջ դաստակի մկանային ուժը մեծանում է 75 կգ-ով, իսկ աղջիկների մոտ՝ 2 անգամ քիչ: Ոչ միաբժեք տվյալներ են ստացվել դիմացկունության վազքի արդյունքներում (աղ. 2): Այսպես, 6-7 և 8-9 տարիքային խմբերում ավելի դիմացկուն են աղջիկները, իսկ 10-11 տարիքային խմբում տղաների արդյունքները 4 անգամ ավելի լավն էին, քան աղջիկներինը, դիմացկունության գրեթե նման ցուցանիշներ են դրսևորել 12-14 տարեկան երկու սեռի դպրոցականները, իսկ 15-17 տարիքային խմբում աղջիկները չգիտես ինչու ավելի դիմացկուն են 2000 մ վազքում:

*Աղյուսակ 2.*

*Շարժողական պատրաստվածության ցուցանիշների տարիքային տեղաշարժերը*

Տարիքը	Աջ դաստակի ուժը, կգ	Հեռացատկ տեղից, սմ	Վազք 20 մ, վրկ.	Դիմացկունության վազք, վրկ.
6	4.0±0.20	102.0±1.34	5.01±0.05	249±3.96
	3.0±0.16	90.3±1.83	5.8±0.16	270±6.21
7	6.0±0.29	105.6±1.39	408±0.08	246±3.86
	5.0±0.30	94.6±3.21	5.6±0.12	260±5.23
8	9.0±0.31	116.3±1.37	404±0.10	385±4.44
	9.0±0.58	98.3±3.01	5.3±0.12	399±6.05
9	11.0±0.62	135.6±2.19	4.2±0.07	383±4.41
	10.0±0.74	100.0±3.30	5.1±0.11	405±7.86
10	14.0±0.67	140.5±3.43	3.9±0.12	298±9.45
	13.02±0.47	110.0±3.02	4.8±0.07	305±4.86
11	18.0±0.75	143.3±2.64	3.7±0.08	270±3.94
	16.0±0.59	126.4±3.26	4.5±0.09	300±8.97
12	21.0±1.19	156.8±7.08	3.6±0.15	240±11.5
	19.0±1.24	128.6±2.99	4.1±0.12	260±10.1
13	27.0±2.16	168.7±4.02	3.4±0.03	236±4.58
	22.0±1.44	130.1±3.49	3.7±0.15	250±8.37
14	36.0±2.05	176.5±2.58	3.2±0.02	231±6.0
	26.0±0.95	138.7±3.59	3.6±0.08	242±6.44

15	47.0±3.74	186.0±16.6	3.1±0.04	630±9.38
	29.0±1.68	142.8±5.05	3.4±0.08	670±11.3
16	60.0±3.59	197.3±5.07	3.0±0.04	6.21±13.1
	33.0±2.13	146.3±4.60	3.3±0.06	6.65±7.5
17	79.0±3.05	209.1±1.59	2.9±0.01	618±4.38
	37.0±1.51	157.6±3.75	3.2±0.03	647±7.29

Ծանոթացում. համարիչում՝ տղաներ  
 հայտարարում՝ աղջիկներ

Այսպիսով, ուսումնասիրվող ցուցանիշների օնտոգենետիկ փոփոխությունները նույնատիպ չեն, ինչը բացատրվում է օրգանիզմի զարգացման և ձևավորման անհամաչափությամբ և տարածամեկտությամբ: Դպրոցականների աճի շրջանում հենց այսպիսի անհամաչափ զարգացումն էլ իր հետքն է թողնում ֆիզիկական վիճակի հատկանիշների և ցուցանիշների փոփոխության վրա:

Ուշադրության է արժանի տարբեր տարիքի և սեռի դպրոցականների ֆիզիկական վիճակի ուսումնասիրվող յուրաքանչյուր հատկանիշի և ցուցանիշի անհատական փոփոխականության մեծ լայնույթը: Պետք է եզրակացնել, որ նշված տեղաշարժերն ունեն տարբեր պատճառներ, որտեղ ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև ֆիզիկական դաստիարակության գործընթացի դրվածքը:

**Եզրակացություններ:** Սյունիքի մարզի դպրոցականների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության հատկանիշների տարիքային փոփոխությունների բացահայտված օրինաչափությունները՝ որպես նպատակահարմար հիմք, կարող են օգտագործվել երկու սեռի սովորողների համապատասխան նորմատիվային պահանջների մշակման և բազմակողմանի ներդաշնակ զարգացման խնդիրների համակարգի կառուցման և գնահատման տարածաշրջանային համապատասխան սանդղակների մշակման համար:

Քննարկվող տեսանկյունից ստացված տվյալները կարող են նպաստել դպրոցականների հիմնական շարժողական ընդունակությունների մշակման տեսական սկզբունքների բացահայտմանը՝ հաշվի առնելով նրանց տարիքային դինամիկայի օրինաչափությունները: Այս առումով թելադրվում է ֆիզիկական կուլտուրայի դասերին ֆիզիկական պատրաստության հատուկ հարմարեցված ծրագրի մշակման անհրաժեշտությունը:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. Ղազարյան Ֆ. Գ., Մարդու ֆիզիկական վիճակի մոնիթորինգ, Երևան, 2007, 215 էջ:

2. Մկրտչյան Թ. Լ., Դպրոցականների շարժողական պատրաստվածության իրականացման մեթոդական պայմանները ֆիզիկական դաստիարակության գործընթացում. Թեկն. ատեն. սեղմագիր, Երևան, 2016, 22 էջ:

3. Круцевич Т.Ю., Современные подходы к организации системы физического воспитания школьников Украины //Материалы XXII международного конгресса. Тбилиси, 2018, с. 436-439.

4. Левитес Д.Г., Школьное обучение как инструмент педагогического насилия //“Педагогика”, 2018, N3, с. 38-43.

5. Саркисян С., Как здоровье, армянский подросток? “Новое время”, 2011, 29 сентября.

6. Шишова А.В., Персонификация медико-педагогического сопровождения обучающихся с учетом гетерохронии их развития. Тезисы международной конференции. М., 2016, с. 121.

7. Meisner K., Telensy vychovy a vykopost zaki 16 az 18 letzi se zvlastnmm vzetelem k pozadavkum arawadu.-II Mezionarodnu Kongres. Praga: 1996, s. 112-114.

8. The Health of Youth Gross-National Suryey. WHO Regional Publication. European series. 1996, N69.

## **МОНИТОРИНГ ФИЗИЧЕСКОГО СОСТОЯНИЯ ШКОЛЬНИКОВ СЮНИКСКОГО РЕГИОНА**

**Մկրտչյան Թուխմանուկ**

*Государственный институт физической культуры и спорта Армении,  
Армения*

### **Аннотация**

Физическое состояние школьников – уровень физического развития и двигательной подготовленности – является одним из важных компонентов физического совершенства человека. Поэтому оценка уровня физического состояния школьников является неотъемлемой и обязательной частью любой программы по физическому воспитанию, одним из критериев определения результативности процесса физического воспитания в общеобразовательной школе нашей страны.

Анализ литературных источников свидетельствует об ухудшении физического состояния школьников разных стран. Аналогичная картина характерна и для школьников Армении. Изложенное подчеркивает важность и необходимость проведения систематического мониторинга физического состояния школьников разного возраста и пола, особенно в отдаленных и сельских районах нашей страны.

В настоящей работе впервые получены и обсуждены данные, характеризующие основные гендерные признаки и показатели физического состояния школьников 6-17 лет, постоянно проживающих в Сюникском марзе. Изучены признаки длины и веса тела, а также показатели быстроты движений, мышечной силы, прыгучести и выносливости у 1067 школьников обоего пола.

В итоге установлено, что онтогенетические изменения показателей физического состояния неоднородны и неравномерны, что обусловлено закономерностями роста и развития организма детей разного школьного возраста.

Выявленные закономерности возрастных признаков физического развития и двигательной подготовленности школьников Сюникского марза могут быть использованы как целесообразная основа для разработки соответствующих нормативных требований и построения системы задач всестороннего и гармонического развития учащихся обоего пола, разработки соответствующих оценочных региональных шкал и программ по их физическому воспитанию.

*Ключевые слова:* мониторинг, физическое развитие, двигательная подготовленность, процесс физического воспитания, индивидуальное развитие, педагогическое тестирование.

### **Список использованной литературы**

1. Казарян Ф.Г., Мониторинг физического состояния человека. – Ереван. – 2007. – 15 с.
2. Мкртчян Т.Л., Методические условия реализации двигательной подготовки школьников в процессе физического воспитания: Автореф. Дисс..., к.п.н., Ереван, 2016. – 22 с.
3. Круцевич Т.Ю., Современные подходы к организации системы физического воспитания школьников Украины // Материалы XXII Международного конгресса. – Тбилиси. – 2018. – с. 436-439.
4. Левитес Д.Г., Школьное обучение как инструмент педагогического насилия // Педагогика. – 2018. – №3. – с. 38-43.
5. Саркисян С., Как здоровье, армянский подросток? // “Новое время”. – 2011, 29 сентября.
6. Шишова А.В., Персонификация медико-педагогического сопровождения обучающихся с учетом гетерохронии их развития.-Тезисы международной конференции . – М.: 2016. – с. 121.
7. Meisner K., Telensy vychovy a vykopost zaki 16 az 18 letzi se zvlastnnm vzetelem k pozadavkum arawadu.-II Mezionarodnu Kongres. – Praga: 1996. – s. 112-114.
8. The Health of Youth Gross-National Suryey.-WHO Regional Publication.-European series. – 1996. – N 69.

## **MONITORING OF THE PHYSICAL CONDITION OF SCHOOLCHILDREN IN THE SYUNIK MARZ**

**Tukhmanuk Mkrtchyan**

*Armenian State Institute of Physical Culture and Sport,  
Armenia*

### **Summary**

The physical condition of schoolchildren: the level of physical development and motor readiness is one of the most important components of the physical perfection of a man. Therefore, the assessment of the level of schoolchildren's physical condition is an integral and mandatory part of any physical education program and one of the criteria for determining the effectiveness of the physical education process in comprehensive school in our country. The analysis of the literary sources indicates a deterioration in physical condition of schoolchildren of different countries. A similar picture is typical for schoolchildren in Armenia.

The above emphasizes the importance and the need for systematic monitoring of the physical condition of schoolchildren of different ages and sexes, especially in remote and rural areas of our country.



In this paper, we discuss data on the signs of the main gender characteristics and indicators of the physical condition of schoolchildren aged 6-17 years old, permanently living in the Syunik Marz. The signs of the body growth and weight as well as the indicators of movement speed, muscle strength, jumping ability and endurance in 1067 schoolchildren of both sexes have been studied.

As the result of the study, it was found that ontogenetic changes of the indicators of the physical condition are heterogeneous and uneven, which is explained by the laws of the growth and development of the body of schoolchildren of different ages.

The revealed patterns of age related signs of physical development and physical readiness of schoolchildren in the Syunik Marz can be used as an appropriate basis for developing relevant regulatory requirements and creating a system of tasks for the comprehensive and harmonious development of schoolchildren of both sexes, the development of appropriate regional assessment scales and physical education programs.

**Keywords:** *monitoring, physical development, motor readiness, process of physical education, individual development, pedagogical testing.*

### **References:**

1. Ghazaryan F. G., Monitoring the physical condition of a person. Yerevan. -2007.-215p.
2. Mkrtychyan T. L., Methodological conditions for the implementation of motor training of schoolchildren in the process of physical education: Abstract, thesis. Ph.D., Yerevan 2016,12p
3. Krucevich T. U., Modern approaches to the organization of the system of physical education schoolchildren of Ukraine. -Materials of the XXII International congress. -Tbilisi. -2018.-p.436-439
4. Levites D. G., Schooling as an instrument of pedagogical violence //Pedagog. -2018.-N3.-p.38-43
5. Sarkisyan S., How is the state of teenagers' health? "New time". -2011.-September 29
6. Shishova A. V., Personification of medical and pedagogical support of schoolchildren with taking into account the heterochrony of their development. Theses of the International conference.-M: 2016.-p. 121
7. Meisner K., Telensy vychovy a vykopost zaki 16 az 18 letzi se zvlastnm vzetelem k pozadavkum arawadu. -II Mezionarodnu Kongres. -Praga: 1996.-s. 112-114
8. The Health of Youth Gross-National Suryey. -WHO Regional Publication.-European series.-1996.-N69

*Материал был представлен и отправлен на рецензию: 17.09.2019*

*Принято к публикации: 01.10.2019*

*Рецензент: доктор пед.наук, проф. Елена Акобян*

*The material was submitted and sent to review: 17.09.2019*

*Was accepted for publication: 01.10.2019*

*Reviewer: Doctor of Sciences, Prof. Elena Hakobyan*